ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-03

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 3 նիստի

15-ը նոյեմբերի 2024թ.

Աժ 314 սենյակ, ժ.16:00

Ս.թ. նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանների ուսումնասիրություն,
2. Մրցութային խորհրդի անդամների կողմից հավակնորդների վերաբերյալ զեկույցների ներկայացման բաշխումը,
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի հարցազրույցի փուլի անցկացման օրվա, ժամի և տեղի սահմանում:

Խորհրդի հինգ անդամներից նիստին մասնակցում էին երեքը՝ Արուսյակ Ջուլհակյանը, Սոնա Խալաֆյանը և Նինա Փիրումյանը: Նիստը վարում էր՝ Արուսյակ Ջուլհակյանը:

Նիստին մասնակցում էր նաև Աժ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

| | |
|---|---|
| Օրակարգի 1-ին հարց | Ա. Ջուլհակյանը ներկայացրեց Նարինե Ազարյանի, Տիգրան Բաբիկյանի, Ժիրայր Կարապետյանի, Արսեն Մանուկյանի և Արմեն Մարուխյանի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները : |
| *Խորհրդի որոշումը* | *Խորհուրդը ուսումնասիրեց Նարինե Ազարյանի, Տիգրան Բաբիկյանի, Ժիրայր Կարապետյանի, Արսեն Մանուկյանի և Արմեն Մարուխյանի բարեվարքության ստուգման նպատակով իրականացված հարցումների պատասխանները:* |
| Օրակարգի 2-րդ հարց | Խորհուրդը որոշեց անցկացնել վիճակահանություն և պարզել թե խորհրդի անդամներից յուրաքանչյուրը որ հավակնորդի վերաբերյալ զեկույցով է հանդես գալու: |
| *Խորհրդի* | *Խորհուրդը վիճակահանությամբ որոշեց, որ* |

| | |
|---|---|
| *որոշումը* | *Նարինե Ազարյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի Արուսյակ Ջուլհակյանը,*<br><br>*Տիգրան Բաբիկյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի Նինա Փիրումյանը,*<br><br>*Ժիրայր Կարապետյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի Սոնա Խալաֆյանը,*<br><br>*Արսեն Մանուկյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի Հարութ Ակլունցը,*<br><br>*Արմեն Մարուխյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի Արթուր Հովսեփյանը:*<br><br>*Կողմ 3 դեմ 0* |
| Օրակարգի<br><br>3-րդ հարց | Հաշվի առնելով, որ խորհուրդը ուսումնասիրեց Նարինե Ազարյանի, Տիգրան Բաբիկյանի, Ժիրայր Կարապետյանի, Արսեն Մանուկյանի և Արմեն Մարուխյանի բարեվարքության ստուգման նպատակով իրականացված հարցումների պատասխանները՝ որոշվեց սահմանել հարցազրույցի անցկացման օրը, ժամը և տեղը: |
| *Խորհրդի որոշումը* | *Խորհուրդը որոշեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի հարցազրույցի փուլը անցկացնել նոյեմբերի 29-ին ժամը 10:00-ին, Ազգային ժողովում, 314 սենյակում:*<br><br>*Կողմ 3 դեմ 0* |

Նիստը վարող՝ Ա. Ջուլհակյան

Նիստի քարտուղար՝ Դ.Աթոյան